ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական
համայնքի ղեկավար Ա. Գրիգորյան
2013թ. 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏՆ, գործունեության համակարգման վարչության պետ՝ Ա. Ղուկասյանի, համայնքի ավագանու և 109 համայնքի բնակիչների

22-01-2014թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով. « Տեղական ինքնակառավարման մասին », «Իրավական ակտերի մասին». ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայանության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2013թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք կյանքի կոչման ուղղությամբ է եղել լուծելու 2013թ. 2-րդ կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ ոլորտների ներկայացնում եմ Ձեզ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպված է աշնանացան հացահատիկի վարի և ցանքսի աշխատանքները:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Նաև նաև չմշակված հողատարածքներ,որի հիմնական պատճառներն են՝

1. Հողատեխնիկամիջոցների բացակայությունը:
2. Սերմանյութի պակասը:
3. Պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությունը:

Ուշադրության կենտրոնում է պահված աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Տարվա ընթացքում կատարվել է նաև դաշտամիջյան ճանապարհների և առուների վրա խողովակների ընթացիկ վերանորոգումներ, փոխարինումներ, որը նպաստակով համայնքի բյուջեից ծախսվել է 1650.0 հազար դրամ:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է 87.4տոննա սելիտրա և 4700 լիտր դիզելային վառելանյութ.

Անմիջական հսկողություն է իրականացնում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղությամբ: Կենդանիների շրջանում չի արձանագրվել հիվանդության դեպքեր:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 7 առևտրի օբյեկտ:

## ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողության է իրականացվում հողերի նպատակային և օգտագործման,ինչպես նաև սեփականաշնորհման վրա:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:
Սիստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:
Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:
Սիստեմատիկաբար, շաբաթական 2օր կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2013թ. համայնքի բյուջեից 1500.0 հազար դրամ:

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:
Աշակերտների թիվը 301:
Աշխատողների թիվը՝ 46-ը, որից՝ ուսուցիչներ ՝ 31:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձ մակարդակի վրա: Նախադպրոցական երկու խմբերի համար համայնքի բյուջեից տարեկան 2 0 միլիոն դրամ դրամաշնորհ է հատկացվում խմբերի գործունեության պահպանման համար:
Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, ապրիլի 7-ի, մայիսի 9-ի և մայիսի 28-ի, տարեմուտի տոնածառի հանդեսների կապակցությամբ ծախսվել է 2300.0 հազար դրամ :
Մշակույթի տանը տեղակայված է նաև գրադարանը , որը վերանորոգված և կահավորված է, ունի 11535 կտոր գրականություն:Գրադարանը մշակույթի հետ համատեղ կազմակերպել է տարբեր բնույթի միջոցառումներ, գրական ցերեկույթներ:
Մեծ ուշադրություն է դարձվում քոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:
Համայնքում աշնանից մինչև վաղ գարուն Մշակույթի տանը գործում է հանգստի խաղասենյակ, որտեղ անցկացվում են նարդու, շախմատի, շաշկու և այլ սեղանի խաղերի մրցաշարեր դրամական մրցանակներով:
Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված, ծաղկեպսակներ է դրվել զոհված ազատամարտիկների գերեզմանին և հուշարձան համալիրին:
Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը, Մշակույթի տանը գործում է բռնցքամարտի, կարատեի և մարտեր առանց կանոնների խմբակները ( ղեկավարությամբ քարերար Վահան Ավագյանի):
Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է առողջապահության ոլորտը: Բուժամբուլատորիայի նոր շենքի քարտադարանի համար համայնքի բյուջեից 2013թ. դրամաշնորհի տեսքով ծախսվել է 330.0 հազար դրամ:
Աջակցում է սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական նիմնարկի աշխատանքները:
Բուժ. ամբուլատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա:
Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով,որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին:
Ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահովների ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն, տարվա ընթացքում համայնքի շուրջ 140 սոցիալապես անապահով ընտանիքների, նորածինների երեխաների մայրերի և մահացածների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 3830.0 հազար դրամ:

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 401 թոշակառուներ, այդ թվում 353 ծերության և աշխատանքային, 2-ը կերակրողը կորցնողի, 46-ը հաշմանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 114: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքի շուրջ 110 բաժանորդներ օգտվում են թվային հեռախոսակապից:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

2013թվականին համայնքում կատարվել է հսկայածավալ աշխատանքներ:

Համայնքում կառուցվել է երկու ավտոկանգառի սպասատեղի, որի համար ծախսվել է 705.4 հազար դրամ:

310.7 հազար դրամ ծախսվել է համայնքի փողոցների կանաչապատման աշխատանքների վրա, կենտրոնական փողոցի երկայնքով մոտ 1 կմ. տնկվել է թփուտներ:

Համայնքի փողոցների 60 %-ից ավել չերնմապատված են:

Մշակույթի տանը գործում է ժող. երգի-պարի, լատինաամերիկյան պարերի խմբակներ, ինչպես նաև դաշնամուրի, դիզայնի խմբակներ:

Համայնքը գրեթե 80% -ով գազաֆիկացվել է (430 տնտեսություն):

Համայնքի միջոցներով ձեռք է բերվել գյուղտեխնիկայի սարքավորումներ, որի համար վճարվել է 4500.0 հազար դրամ:

Համայնքի տնտեսությունների թիվը ՝ 897, առկա բնակչության թիվը 3537 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1633 մարդ:

Տարվա ընթացքում համայնքում ծնվել են 47 երեխա, մահացածների թիվը ՝ 30:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թ. 2-րդ կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

| N | անվանումը | տարեկան պլան | 2013թ 2-րդ կիսամյակ | | 2013թ տարեկան | | կատարողական % | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | պլան | փաստացի | 2-րդ կիսամյակ | տարեկան |
| 1 | հողի հարկ | 9000.0 | 5250.0 | 6302.6 | ----- | 9119.0 | 120.0 | 101.3 |
| 2 | գույքահարկ | 4520.0 | 2570.0 | 3273.5 | ----- | 4912.8 | 127.4 | 108.7 |
| 3 | տեղական տուրքեր | 150.0 | 60.0 | 50.2 | ----- | 130.0 | 83.7 | 86.7 |
| 4 | տեղական վճար | 50.0 | 25.0 | ----- | ----- | ----- | ----- | ----- |
| 5 | ոչ հարկային եկամուտներ | 3601.2 | 50.0 | 2076.3 | ----- | 6040.2 | ----- | 167.7 |
| 6 | պաշտոնական լիազորության (անասնաբույժի ) | ----- | ----- | ----- | ----- | ----- | ----- | ----- |
| 7 | պետ. բյուջեից սաhմանդրվող դոտացիա | 42240.6 | 21199.6 | 21266.6 | ----- | 42307.6 | 100.3 | 100.2 |
| | ընդամենը վարչական բյուջե | 59561.8 | 29154.6 | 32969.2 | ----- | 62509.6 | 111.7 | 104.9 |
| 8 | հողի օտարումից մուտքեր | ----- | ----- | ----- | ----- | ----- | ----- | ----- |
| 9 | տարեսկզբի ազատ մնացորդ | 14318.0 | 14318.0 | 14318.0 | ----- | 14318.0 | ----- | ----- |
| | Ընդամենը | 73879.8 | 43472.6 | 47287.2 | ----- | 76827.6 | 108.8 | 104.0 |

Բերված աղյուսակից երևում է, որ համայնքի բյուջեի եկամուտների զգալի բաժինը պլանավորվել և հավաքագրվել է 2013թ. 2-րդ կիսամյակում, այսպես.

Վարչական բյուջեի գծով 2-րդ կիսամյակում հավաքագրվել է եկամուտների 111.7%, ընդամենը եկամուտների 108.8 %-ը, այդ թվում սեփական եկամուտների պլանը կատարվել 127.7 %-ով:

2013թ. 2-րդ կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

| N | ծախսերի անվանումը | 2013թ 2-րդ կիսամյակ | | 2013թ տարեկան | | կատարողական % | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պլան | փաստացի | պլան | փաստացի | | |
| 1 | տեղական ինքնակառավարում | 15727.8 | 13333.5 | 28275.0 | 22970.8 | 84.8 | 81.2 |
| 2 | Համայնք.այլ ծառ. | 0 | 2816 | 5125.0 | 3882.0 | ----- | 75.7 |
| 3 | աղբահանություն | 750.0 | 750.0 | 1500.0 | 1500.0 | 100.0 | 100.0 |
| 4 | մշակույթ և ռադ. հեռ. հաղ. | 6808.7 | 6927.6 | 12958.7 | 10507.6 | 101.7 | 81.1 |
| 5 | կրթություն | 1000.0 | 750.0 | 2000.0 | 1655.0 | 75.0 | 82.7 |
| 6 | առողջապահություն | 400.0 | 330.0 | 400.0 | 330.0 | 82.5 | 82.5 |
| 7 | Սոց. օգնություն | 3200.0 | 2030.0 | 5000.0 | 3830.0 | 63.4 | 76.6 |
| 8 | արտաքին լուսավորում | 1400.0 | 825.6 | 2600.0 | 1193.7 | 59.0 | 45.9 |
| 9 | Գյուղատնտեսություն | 926.0 | 555.6 | 1501.2 | 980.8 | 60.0 | 65.3 |
| 10 | պահուստային ֆոնդ | 201.9 | ----- | 201.9 | ----- | ----- | ----- |
| 11 | ֆոնդային բյուջե | 0 | 7338.2 | 14318.0 | 7338.2 | ----- | 51.3 |
| 12 | Ընդամենը | 30414.4 | 35656.5 | 73879.8 | 54188.1 | 117.2 | 73.3 |

«Քաղացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն ,Աղավնատան գյուղապետարանում 2-րդ կիսամյակի ընթացքում ստացվել է 26 դիմում, տարեկան՝ 63 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր,որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:
Ընթացիկ ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել են 183 գրություն, հղվել է 235 պաշտոնական գրություն:Քաղաքացիներին տրվել է 987 տեղեկանքներ: Տրվել է համայնքի ղեկավարի 21 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 18 որոշում:
2013թ. տարվա ընթացքում գյուղապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 12 մարդ, որից 7-ը համայնքային ծառայողներ, 4-ը սպասարկող և տեխնիկական աշխատողներ, 9-ը «Կրթություն և մշակույթ միացյալ տնօրինության »աշխատողներ:
2013թ դրությամբ աշխատավարձի և սոց վճարումների պարտքեր չկան:
2013թ. ընթացքում համայնքի ավագանին գումարել է 10 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:
Դեկտեմբերի 30-ին գյուղապետարանի կողմից կազմակերպվել է երեխաների տոնածառի հանդես, բաժանվել նվերներ և տոպրակներ:
Դեկտեմբերի 30-ին շուրջ 90 ուսանողների համար Մշակույթի տան ճեմասրահում անցկացվեց տարեմուտի երեկո՝ կենդանի երաժտությամբ, մասնակցությամբ համայնքի ակտիվի, գյուղապետարանի, <<Կրթություն և Մշակույթ միացյալ տնօրինության >> աշխատակիցների, <<Աղավնատան Բ.Ա. >> , Դպրոցի ներկայացուցիչների:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով, ուժերով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Մանկապարտեզի շենքի կառուցում:
2. Ճանապարհների ասֆալտապատում՝ միջմարզային ճանապարհի Աղավնատուն-Հովտամեջ հատված
3. Գյուղտեխնիկայի ձեռք բերում (տրակտոր և գյուղգործիքներ, կոմբայն):
4. Վերամշակվող գործարանի շահագործում կամ նորի կառուցում:

***Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավար՝*** ***Ա. Գրիգորյան***